## Արձանագրություն N 5

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար ձմեռային անվադողերի ձեռքբերման նպատակով կազմակերպված
ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/31 ծածկագրով գնման ընթացակարգի
/այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19 | 21 նոյեմբերի 2024թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Թորոսյան, Գ.Հարությունյան, Հ.Հարությունյան, Ա.Լալայան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Սաղաթելյան

### *1. Տեղեկություն՝ Լիազոր մարմնին դիմելու և խնդրին լուծում տալու, հայտի գնահատման վերաբերյալ*

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը՝ 14.11.2024թ.-ին գրությամբ դիմել է Լիազոր մարմնին՝ գնումների էլեկտրոնային http://eauction.armeps.am համակարգում «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնահատման, պայմանագրի ծանուցման և կնքման գործառույթները կարգավորելու նպատակով, որին ի պատասխան 20.11.2024թ.-ին Լիազոր մարմնից ստացվել է պատասխան գրությունը, համաձայն որի՝ Համակարգում կատարվել են անհրաժեշտ փոփոխությունները, ինչի արդյունքում հնարավոր է իրականացնել հայտի գնահատումը:

Հիմք ընդունելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի ԵԴ2/7722/02/24 վճիռը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը չի բողոքարկում նշված վճիռը, գնահատող հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Արպանիվ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:*

### *2. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ*

21.11.2024թ.-ին Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «Արպանիվ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.3 «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ:

2.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ________________ Վարդան Հարությունյան
անդամներ՝ ________________ Վարդան Թորոսյան
________________ Գարիկ Հարությունյան
________________ Հրայր Հարությունյան
________________ Անժելա Լալայան
քարտուղար՝ ________________ Հերմինե Սաղաթելյան